

ԷԶԵՐ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՆԿԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ. Ա. Ն. Ր. Ա. Ն. Կ. Ա. Ր. Ի. Զ.

ՅՈՒՎ. ՀԱՆՆԻՄ ԳՐԱՀԱՆՐԱՅ

(ԺԵ. ԳԱՐ)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ. ԳԱՐԱԾՐՋԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ. ՄԱՆՐԱՆԿԱՐԶԻ ԿԵԱՆՔԻ ԷԱԿԱՆ ԳԾԵՐԸ.
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ. ԱՐԻԵՍՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

1. - Ներածութիւն

Հայ մանրանկարչական եւ զրջազրա-
վան արւեստների պատմութեան մէջ իր
փան արւեստների տաղանդաւոր արւեստա-
ուրոյն էջն ունի տաղանդաւոր արւեստա-
դէտ Յովհաննէս քահանան, որի ստեղծա-
դործական արւեստի հիմնական էջերը ձեռ-
տանում են ԺԵ. դարի առաջին շրջանը եւ
ժամանակագրութեան հայ մշակութի մի լուա-
դոյն կենտրոնի՝ Նիղոսի (Հիլանի), զեղ-
արւեստական դպրոցի ձեւակերպների եւ
հոթեան հետ:

Ընդգծենք եւ այն, որ վաստակաւոր
արւեստագէտ Յովհաննէս քահանան իր
դարաշրջանում փայլել է ոչ միայն որպէս
իր կոչման բարձրութեան վրայ կանգնած
մի իմաստուն հոգեւորական եւ վստելել
մի ժողովրդի սէրն ու համակրանքը, այլեւ
իր վարպետ գրչով եւ հմուտ վրձինով հայ
մանրանկարչական եւ զրջազրա-
ների դարաշրջանի գծով արել է ուշադրաւ
նշանակաւոր եւ պատիւ է բերել Նիղոսի
զեղարւեստական դպրոցին:

Սակայն, ուշադրաւ է մի հանգամանք:
Մանրանկարիչ Յովհաննէս իր գրած ձե-
ռագրերի յիշատակարաններում նախագր-
րել է իր զեղարւեստական արժանիքները,
իր զրջազրա- եւ նկարչական վարպետու-
թիւնը թերազնահատել է այսպիսի բնորո-
շումներով. «անարհեստ գրիչ», «անի-
շումներով», «անարհեստ գրիչ», «գանաթան գր-
մաստ եւ տիմար գրիչ», «յոգնամեղ
չակ», «զանալիտան ծաղկող», «յոգնամեղ

եւ անարհեստ»: Բայց վաստակաւոր ար-
ւեստագէտի աւանդ թողած ձեռագրերը,
ծաղկանկարներն ու մանրանկարները վր-
կայում են, որ նա ԺԵ. դարում հոչակուել
է որպէս առաջնակարգ գրիչ եւ աննման
ծաղկող:

Այդ կարեւոր հանգամանքը հաստա-
տում են ԺԵ. դարի բեղմնաւոր գրիչ՝ Զա-
քարիա քահանայի(*) ձեռքով ՊԾ (850 +
551 = 1401) թւին Նիղոսի զեղարւեստա-
կան դպրոցում գրած ձեռագիր Աւետարա-
նի յիշատակարանի հետեւեալ տողերը.
«... Այլ եւ գրեցաւ սուրբ Աւետարանս ձե-
ռամբ Զաքարիայի սուտանուն քահանայի,
որդւոյ Մկրտիչ քահանայի, եղբոր Յով-
հաննէս քահանայի՝ իմաստուն եւ աննման
գրիչի եւ ծաղկողի»:

2. - Դարաշրջանի պատկերը

Ինչպիսի՞ ժամանակում ապրել է եւ բու-
տեղծագործել մանրանկարիչ Յովհաննէ-
սը:

(*) Նիղոսի դպրոցի զրջական արւեստի վաս-
տակաւորների շարքում Զաքարիա քահանան ա-
ռանձին տեղ ունի: Նա ԺԵ. դարի լուսաւոր եւ
առաջադէմ հոգեւորականներից՝ Մկրտիչ քահա-
նայի որդին է եւ եղբայր տաղանդաւոր մանրա-
նկարիչ Յովհաննէսի: Դեռ 1401 եւ 1402 թւական-
ներին, Նիղոսի դպրոցում, նա ընդգործեալով է
մի Աւետարան: Այնուհետեւ նրան տեսնում ենք
վանում, որ գրում է մի նոր Աւետարան, ապա՝
1417 թւին, նորից՝ վերադառնում է Նիղոսի եւ հայ
բառարանագիտութեան ներքում մի բառգիրք:

էր Մամբանա կնոջ, եւ ունէր չորս մանչ
եւ մէկ աղջիկ զաւակ: Կիրակոս Գանձա-
կեցի խօսելով Մարգարանի որդի Գրիգորի
մասին, կը վկայէ. «... Գրիգոր իշխանն
որդի մարգարանին՝ (սրբազրէ Մարգարա-
նին. Յ. Բ.) Եղբայր Ասլան պէկի, Սար-
գաի եւ Ամիրային, յազգէ Մամիկոնէ-
ից»(9): Իսկ Քուրդ իշխանի (Վաչու-
տեանց) մասին խօսած առեւն անոր կինը
կը յիշէ խորիշահ դուստր մարգարանայ
(սրբազրէ Մարգարանայ. Յ. Բ.) քոյր Աս-
լան Պէկին եւ Գրիգորայ(10):

Մարգարան Բ. թողուցած է քանի մը ար-
ձանագրութիւններ, որոնցմէ ինչ որ ծա-
նօթ է ինծի հոս կու տամ:

Բարձրաքաչի վանքին ժամատան հա-
րաւային պատին ճակատը կայ սա արձա-
նագրութիւնը.

«Թու (ին)

ՈՀ (1221)

Ի թագաւորութե(ա)ն Դէաւրդեա որ-
դոյ Թամարին: Եւ իշխանութ(ան) աթա-
պակ Իւանէի եւ զաւակաց նորա Աւագին
եւ Շահնշահի եւ Մարծպան որդի Սա(ր)-
գաի թոռն Համ(ազասպ)-

եանց յազգէ Մամիկոնեանց շինեցի
ղխնքս եւ զամէն եկեղեցիքս յիմ հալալ
արդեանց եւ արարի ինձ տուն եւ զերեղ-
մանատեղի եւ զաւակաց իմոց եւ աղղա-
կանաց եւ Ծա(ղկուտն)

որ էր իմ հայրենիք զանձագին արարի
եւ Սէրեկադոմ աւերակ եր շինեցի եւ ա-
ւանդեցի եկեղեցոյս եւ յՈղջարեղի ալդի
մեծ եւ զարդարեցի մեծագին պատուա-
կան սպասիւք խ(ա)շիւք եւ մասամբք

եւ զրէնաւք եւ կարգեցի զ:Բ: [2] ա-
ւագ բեմն պատարագել զՔ(րիստո)ս յիմ
անուն անխափան զՋրաւրհնէք աւրն Մա-
մբան ամուսնո իմո արդ որ հակառակ
կա զեղի կամ կոպարի խել եւ հանել յե-
կեղեցոյս

աղդի եւ մեր մեղացն պարտական ձղի-
ցի առաջի Ա(ստուծո)յ Կաէնի եւ Յուդաի
մասնակից է: ՅԺԸ: Հայրապետացն նորո-
վեալ եղիցի եւ որ հաստատ պահէ զա-
ւանդս ա...»(11):

Կերեւայ թէ ասոր գրեթէ յար եւ նման
արձանագրութիւն մը եւս փորագրել տը-
ւած է եւ նոյն տեղը զետեղած Մարգարան
Բ.(12):

Մարգարան Բ. ունի երրորդ արձանա-
գրութիւն մը Գոշայ վանքին Ս. Աստուա-
ծածին եկեղեցոյն կամարին վրայ:

«Ես Մարգարան իշխան եւ որդիք իմ Աս-
լան բէգ եւ Գրիգոր միարանեցաք սր.
Աստուածածնիս եւ տուաք ի մեր հայրե-
նեաց Յողջաբերդ ալդի մի եւ ա [1] զու-
թան ի հող յարան աղատ յամէն հարկէ եւ
ստացաք բ [2] աւր պատարագ զեկեղեցիս
ի տանի... որ խ(ա)ւանէ) զատի ի Տեառ-
նէ»(13):

Ալպոյաճեան խօսելով Մարգարան Բ.ի
մասին կ'ըսէ. «1241ին կամ քիչ առաջ կը
մեռնի Մարծպան»(14): Սակայն աղբւրը
չէ նշանակած:

Բարձրաքաչի վանքին ուրիշ մէկ արձա-
նագրութիւնը 1242 թուականով ակնար-
կութիւն չունի Մարծպան Բ.ի մահուան
մասին: Ահա այդ արձանագրութիւնը.

«Ի Թ(ուին)

ՈՂԱ (1242)

Ողորմութ(եամ)քն Ա(ստուծո)յ ես
Սէվծի ծառա Մարծպանս եւ ամուսին իմ
Կատա շինեցաք դմատուռս եւ այլ արդիւնք
յեկեղեցիս տվաք Տիրացու վ(ար)դ(ա-
պետ) եւ միարանքս խոստացան. Ը. [8]
աւր պատա(րա)դել զՔ(րիստո)ս յանուն
մեր Դ [4] ինձ եւ Դ [4] Կատանին կատա-
րիչքն աւրհնեալ եղիցին»(15):

Մարծպան Ա.ի որդւոյն Գրիգորի
պատրոնութեան միջոցին ալ այս Սէվծիի
որդին նոյն վանքին մէջ թողուցած է ան-
թուական արձանագրութիւն մը, որուն
մասին Գրիգորի կենսագրութեան միջոցին
պիտի խօսիմ:

(Շարունակելի)

Յ. ԲԻԻՐՏԵԱՆ

(9) 1910, էջ 259:

(10) Անդ, էջ 351:

(11) Էջմիածին, 1951, Նոյ-Դեկտ. էջ 49-50:

(12) Նոյն, Սեպտ-Հոկտ. էջ 44:

(13) Աղդ. Հանդէս, գիրք Ժ. էջ 24:

(14) Պատմական Հայաստանի Սահմանները, էջ
273բ:

(15) Էջմիածին, Նոյ-Դեկտ. 1951, էջ 46:

Դա այն մոռյլ պատմաչընան էր, երբ բնութեան աղէտը՝ մարախը (մորեխը) եւ համատարած սաստիկ սովը մի կողմից, իսկ Լանկ-Թամուրի, «յանօրէն ամիրա» էղդէնէի եւ Ղարա-Յուսուֆ Ղանի հրոսակաւոր բանակը իրենց հետ խառնուեցին միմեկին կողմից քայքայում են ժողովրդի անտեսական դրութիւնը եւ նրա համար ստեղծում մի դժարին, դառն եւ ծանր վիճակ։

Բայց ժողովրդի անտեսական մոռյլ կեանքի մասին աւելի ցայտուն դադարար տալու համար առաջ բերենք ԺԵ. դարի վաստակաւոր գրիչ Զաքարիայի 1401 թվւին գրած ձեռագիր յիշատակարանի հետեւեալ տողերը. «... Որ վասն ծովացեալ մեղաց խոց ժամանեաց մեղ եւ եկն մարախ, եւ հեղեւ սով սաստիկ ընդ ամենայն երկիր, որ բերէր կապիճ հացն Մ. (200) դր(ամ) եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց... իսկ ըստ թուոյ Ոտարովային Յարեթեան տումարի՝ ՊԾ (850+551=1401) էր մեծ չընանին, ի կաթողիկոսութեան հայկազեանս սեռի տեառն Դաւթի Աղթամարցւոյ եղբար տէր Զաքարիայի, որ վկայական արեամբ կատարեցաւ յանօրէն ամիրայէն էղդէնէի եւ հեղեւ սով մեծ տանս հայոց... եւ ի թագաւորութեանն ալլատեռից Թամար-Լանկի, որ է յաղթող Է անպարտելի, զոր Տէր Աստուածն Իսրայէլի պահէ անխախտ, որ չսատանի զթող մերոյս հայրապետի եւ զմեր ազգին թագաւորի, զի յիշել զանուն սոցա սասանել սաքին եւ ոչ եւս երեւին թշնամիք ճշմարտութեանն։ Եւ գրեցաւ Աւետարանս ի քաղաքիս, որ կոչի Հիդան»։

Առաջ բերենք ժողովրդի դառն դրութիւնը պատկերող մի այլ արժէքաւոր փաստաթուղթ։ Դա տաղանդաւոր գրիչ եւ մանրանկարիչ Յովհաննէսի 1417 թվւին, Հիդանում գրած Աւետարանի յիշատակարանն է, ուր դարաչընանի քաղաքական պատկերը նկատուած է մի անպաճոյճ ոտանաւորով, որից առաջ բերենք հետեւեալ բնորոշ տողերը.

«... Անունն է չար սոցա մեծիս, թուրքստանաց խրոխտ զանիս.

Ղարա-Յուսուֆ սեւ մակադրիս,
Որ տեւէ զազգս մեր եւ զազինս։

Նա կայ Է իշխէ Մերդնայ բերդիս
Եւ Թալրիթու մեծի թաղթիս,
Նըւաճելով զքուրդ եւ զպարսիկս,
Պահանջէ հարկ եւ տոկոսիս։

Իսկ ընդ այս մեծ տրտմութիւնս
Մեղ յաւելու շատ (հ)եծութիւնս,
Ընդ յոյժ... մեր նեղութիւնս...»։

ԺԵ. դարի ընդգծուած փաստական տընեալներն արժէքաւոր են նրանով, որ վաստակաւոր գրիչներ՝ Զաքարիան եւ Յովհաննէսն աւանդատես վկաներ ու աւանջալուր լինելով ժամանակի քաղաքական դէպքերին ու անցուղարձերին, իրենց ընդօրինակած ձեռագիր յիշատակարաններում արձանագրել են հարադատ, ասոյց եւ ճիշտ տեղեկութիւններ։ Այդ վկայութիւններն էլ այսօր վկայում են Լանկ-Թամուրի, էղդէնէի եւ Ղարա-Յուսուֆի վայրագութիւնների մասին եւ պատկերում հայ ժողովրդի անտեսական ու քաղաքական ծանր դրութեան նկարը։

Սակայն, ժողովուրդն աւելի դառն եւ դժարին պայմաններում է ապրում, երբ 1401 թվւին, մորեխի պատճառով, խիզախում, Ղրիմում եւ այլ վայրերում հացի դները բարձրանում են եւ կապիճը վաճառուած է 200 դրամով։

Ահա նման անմխիթար դարաչընանում է ապրում եւ ստեղծագործում ԺԵ. դարի առաջին չընանի վաստակաւոր արեւստագէտ Յովհաննէսը, որ իր ժամանակի ժողովրդի մէջ փայլում է որպէս տաղանդաւոր մանրանկարիչ եւ գրիչ։

3. — Մանրանկարչի կեանքի Կալան գծերը

Վաստակաւոր մանրանկարչի կեանքի պատմութեան մասին չունինք հարուստ տեղեկութիւններ։ Ձեռագրական տուեալները պարզում են, որ նա զաւակն է իր ժամանակի լուսաւոր եւ դադարարական հոգեւորական Մկրտիչ քահանայի։ Իր ու-

սումն ստանում է խիզախի նշանաւոր վանքում, որ իր ժամանակի գրչական ու մանրանկարչական արեւստների խոշոր դպրոցներից մէկն էր։ Այդտեղ Յովհաննէսը պատանեկան հասակից ցոյց է տալիս նըկարչական առանձնատուկ շնորհք։ Այդ միջավայրում էլ հետզհետէ մշակում եւ ձեւակերպում են նրա հոգում թագնած նկարչական գեղեցիկ յատկանիւնները։ Նրա վրայ շատ մեծ ազդեցութիւն են գործում խիզախի նկարչական դպրոցի ժամանակի վարպետ մանրանկարիչները, որոնց ըստեղծագործութիւնների խոր տպաւորութեան ներքոյ էլ նա ամբողջապէս նւիրում է գրչական եւ մանրանկարչական արեւստներին եւ հետզհետէ ընդօրինակում է, ծաղկում ու նկարազարդում մի շարք ձեռագրեր։ Նրա արեւստի հոգնալը շուտով փայլում է իր միջավայրում եւ յարմարեալ է, գնահատուած եւ յարմարեալ սիրում է, գնահատում իր ժաւրում եւ մեծապէս գնահատում իր ժամանակի արեւստներին, այլեւ մեծ մանակի արեւստներին, այլեւ մեծ ժողովրդականութիւն է վայելում։ Բայց դա պատահականութեան արդիւնք չէր։ Նա իր վեանքի մեծ մասն անձկացնելով խիզախի պատմական վանքում, իր հմուտ իրարի ընդօրինակում է Աւետարաններ, Պաշտոն, ծառոց, Յայտաւորք, Շաւարազարդում։ Այդ թանկագին աւանդները ոչ միայն նկարչական ու մանրանկարչական արեւստների գեղեցիկ յուշարկաններ են, այլեւ այսօր ձեզ ցայտուն ձաններ են, այլեւ այսօր ձեզ ցայտուն դադարար են տալիս ԺԴ. դարի խիզախի գեղարեւոտական դպրոցի նկարչութեան ղեկարարութեան եւ մանրանկարիչ Յովհաննէսի արեւստի ձեւակերպումների եւ նաճումների մասին։

Տաղանդաւոր արեւստագէտը վախճանում է խիզախում եւ թաղում պատմաւոր է խիզախում, որտեղ անց էր կացրել իր կեանքի լաւագոյն օրերը եւ կերտել բազմաթիւ ձեռագրեր։

4. — Ստեղծագործութիւնները Տաղանդաւոր արեւստագէտի ընդօրին-

նակած գրչագրերից մէկը ձեզ տանում է 1401 թվականը։ Դա մի ձեռագիր «Մաշտոց» է, որը վաստակաւոր մշակը գրել է «ի դաւառիս խիզախ քաղաքի»։ Այդ համարեալ հաստատում են ձեռագրի յիշատակարանների հետեւեալ տողերը. «Գրեց ի սուրբ եւ ի հոգնաւոր ուխտս սուրբ Սաշ յորջորջեալ, ի դաւառիս խիզախ քաղաքի, ձեռամբ անարհեստ գրչի Յովհաննէսի բանի խնդրողի, ի թվ. ՊԾ (855+551=1401) ... Յայտ ամի եկն թանձր մարախ եւ աւերեաց զքաղաք տեղիս եւ զդաւառս»։

«Մաշտոց»ը իր գեղեցիկ տառերով, խիզախի դպրոցի գրչական արեւստի լաւագոյն գանձերից մէկն է, որը ձեզ ցայտուն դադարար է տալիս վաստակաւոր մանրանկարիչ Յովհաննէսի գրչի վարպետութեան մասին։ Ձեռագիրն այժմ գտնուած է Երեւանի պետական մատենադարանի ձեռագրատանը։

Նոյն 1401 թվականին բագմավաստակ Յովհաննէս գրիչը խիզախում ընդօրինակում եւ հայ մշակոյթին է նւիրում մի նոր ձեռագիր։ Դա մի գեղեցիկ «Ճառոց» է, որի յիշատակարանում կարդում ենք հետեւեալ բնորոշ տողերը. «Բրիստոս Աստուած, թո անսխալական քաղցրութեամբք եւ բարեբար ողորմութեամբք յարութեան եւ անմահական կենացն արժանի արայս զստացաւ սուրբ գրոցս եւ Յով(անէս) պատուական քահանայ... Ընդ նոսին եւ ինձ մեղապարտ գրչի Յովհաննէսի գերանունն խնդրողի բանի եւ ծնաւոցս եւ եղբարց... թվ. ՊԾ (850+551=1401)»,

Մի տարի անց՝ 1402 թվականին, տաղանդաւոր գրիչ Յովհաննէսը խիզախում, «յընտիր եւ ստոյգ աւրինակէ», «կենօք տառապանօք» անհանգիստ, դժարին եւ «տարտամելի աւուրք» ընդօրինակում է եւ ծաղկում մի նոր Աւետարան, որ այժմ գտնուած է Երեւանի պետական Մատենադարանի ձեռագրատանը։ Ուշագրաւ են ձեռագրի յիշատակարանի հետեւեալ տողերը. «... Այլ եւ գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Յովհանիսի անխմաստ եւ տխմար գրչի... բազում աշխատասիրեալ

